

կանը, նա շատ լաւ գիտէ թէ որքան դժգոհութիւն և ատելութիւն պիտի լինէր ամբարուած Թեհրանում ռուսներին դէմ: Դեռ նոր էր վերջացել 1826—1828 թուականների ռուս-պարսկական պատերազմը, որ այնքան ստորացրել էր Պարսկաստանը, ոչնչացրել էր նրա ոյժն ու նշանակութիւնը: Ահա թէ ուր պէտք է որոնել Գրիբոեդովի սպանութեան բուն պատճառը: Եւ դրա ապացոյցն է այն, որ պարսից կառավարութիւնը ոչինչ միջոց ձեռք չառաւ ռուսաց ղեսպանատունը քանդող բազմութեան դէմ:

Կարծես բերանացի պատմութիւնների բուն արժէքը ցոյց տալու համար է որ պ. Ալահվերդեանը իր թարգմանութեան կիցել է և մի այլ ականատեսի պատմութեամբ, վերցրած լրագրից: Այստեղ արդէն Գրիբոեդովի սպանութեան պատճառը Շահի հարեմի մի կին է, գերի վրացուհիներից, որ ղեսպանի միջոցով ուղղւում էր ազատուել հարեմից ու հայրենիք վերադառնալ:

Այսքան հակասական են «ականատեսների» պատմութեանը, և հէնց այդ պատճառով էլ նրանք շատ մեծ արժէք չունեն:

Պ. Ալահվերդեանի թարգմանութիւնը, ընդհանրապէս, բաւարար կերպով է կատարուած: Տեղ-տեղ մենք նկատեցինք հայերէն բնագրի լաւ չը հասկացած լինելը: Յիշենք և մի տարօրինակ հանգամանք. պ. Ալահվերդեանը հայերէն գլխատառ Զ-ն կարդացել է Զ: Այսպէս Իմամ-Ջումէ մօլլայի անունը ռուսերէնում բազմաթիւ անգամ գրուած է Իմամ-Ջումէ (Имамъ-Зумѣ, եր. 15), Զեանդեանի տեղ գրուած Զեանդեան (եր. 19):

Լ.

54) «Գէօտէ», համառոտ կենսագրութիւն (պատկերներով). կազմեց Ս. Թառայեանց, Թիֆլիս, 1900, գինն է 30 կ.:

«Բանաստեղծների թագաւոր» — Գէօթէի կատարելատիպ կենսագրութիւնը պակասում է նոյն իսկ Գերմանիայում, հանձարեղ բանաստեղծի հայրենիքում: Դա այն կենսագրութիւնն է, որ էրիխ Շմիդտի ասելով՝ «կարողանար շատ բան պատմել, բանակոուից հեռու լինէր, և գիտնական հիմնաւորութիւնը ոճի պարզութեան հետ միացնէր»:

Գէօթէն առատ նիւթ է մատակարարել գրական այնպիսի խոշոր քննադատների ինչպէս են՝ Շերէր, Հէն, Դիւնցեր, Քարլայլ, Լիւիս, Գրիմ, Բրանդէս և այլն: Բայց այս հեղինակաւոր անձնաւորութիւնների գրիչը չէ պատկերացրել Գէօթէի

ամբողջական դէմքը. մէկը ուսումնասիրել է երիտասարդ Գէօթէին, երկրորդը՝ նրա բոմանտիկական շրջանը, երրորդը հետազօտել է նրա ստեղծագործութիւնները լեզուաբանական, կրօնական կամ բնագիտական տեսակէտից, վերջապէս չորրորդը՝ իր սեփական տեսակէտից՝ այսինքն այնքանով է հետաքրքրուել պարզելու մեծ բանաստեղծի կեանքը, որքան սա իր դաւանած աշխարհայեալքի իդէալն է մարմնացնում:

Ուսումնասիրութեան ճիւղերի այս տարբերութիւնը, բազմազանութիւնն անխուսափելի էր, որովհետև ուսումնասիրութեան նիւթը մի հասարակ անձնաւորութիւն չէր, այլ մի հսկայ՝ թէ՛ իբրև մարդ և թէ՛ իբրև գեղարուեստի և գրականութեան ներկայացուցիչ:

Երբեմն բաւական լիակատար էր համարում անգլիացի տաղանդաւոր գրող՝ Լիւիսի «Գէօթէի կեանքը», որ առանձնապէս շնորհիւ իր սահուն լեզուի և գրաւիչ ոճի՝ շուտով համարեա ամբողջ Եւրոպայում հանրամատչելի դարձաւ: Բայց Լիւիսի գիրքը վաղուէ արդէն հնացել է. և «Գէօթէ գրականութիւնը» ընականաբար առաջ պէտք է բերէր գիտութեան և ժամանակակից քննադատութեան պահանջներին համապատասխանող աւելի ընտիր աշխատութիւններ: Անցեալ դարի ինստիտուտական թուականների առաջին քառորդից սկիզբ դրուեց այն պատկառելի աշխատութիւնների շարքին, որոնք կապուած են Ա. Բիլշոփսու, Կ. Հայնեմանի, Բ. Մ. Մայէրի, Վիթկովսկու, Բ. Շտայնէրի և ուրիշ յայտնի անունների հետ: Այս նոր հեղինակների գործերը, հասկանալի է՝ աստիճանական որոշ տարբերութեամբ, առհասարակ շատ մօտ են էրիխ Շմիդտի վերոյիշեալ իդէալին. սրանցից մէկի՝ Բերլինի համալսարանի պրիվատ-դօցէնտ Բ. Մ. Մայէրի աշխատութիւնը, մինչև իսկ մի արժանաւոր մրցանակով պսակուեց:

Պ. Թառայեանցի կազմած կենսագրութիւնը, որ Թիֆլիսի Հրատարակչական Ընկերութեան վերջին հրատարակութիւններիցն է—համարեա ամբողջովին Լիւիսի գրքի հետեւողութեամբ է գրուած և յաճախ քաղուածօրէն թարգմանուած նոյն գրքից: Այս կէտը չեչոտւմ է և ինքը հեղինակը իր երկտող յառաջաբանում հետեւաբար Լիւիսի պաշտօնութիւնները ազդել են հայ հեղինակի կազմած կենսագրութեան վրայ: Սակայն պ. Թառայեանցի նպատակը, անխուսափ, աւելի համեստ է եղել: Նա իր «Համառօտ կենսագրութեամբ» ձգտել է հայ ծարաւի ընթերցողներին ծանօթացնել Գէօթէի կեանքի և մասամբ՝ գործերի հետ Բնականաբար նա իր առաջնորդող սկզբունքը պէտք է ընտրէր՝ ըստ կարելոյն հանրամատչելի լինել: Ուրիշ

աղբիւրներից՝ առանձնապէս՝ նորագոյններից, որոնցից յիշատակուում է միայն Բիլչովսկու անունը,—հեղինակը շատ քիչ է օգտուել:

Պ. Թառայեանցի գիրքը բաղկացած է 9 գլուխներից և մի փոքրիկ վերջաբանից՝ «Մահարձան» վերնագրով: Այս ինչը գլուխներում հեղինակը համառօտակի խօսում է բանաստեղծի կեանքի, թուլցիկ կերպով՝ գրական զործունէութեան, մասամբ և բնագիտական աշխատութիւնների մասին: Գրքի զուտ կենսագրական մասը բաւական ամփոփ է և աջող: Այս մասը առհասարակ կրկնակի գրաւիչ կը լինէր, եթէ հեղինակը աւելի օգտուէր մեծ բանաստեղծի բաղմամբիւ նամակներից: Ընդհանրապէս նամակները կեանքի նկարագրութեան ամենավճիռ և հաւատարիմ աղբիւրներից մէկն են կազմում: Հեղինակը յաճախակի ի նկատի պէտք է ունենար նաև Գէօթէի նշանաւոր ինքնակենսագրութիւնը՝ «Wahrheit und Dichtung», որի մասին նա առհասարակ ոչ մի յիշատակութիւն չէ անում:

Մեր նպատակից դուրս է մի համառօտ մատենախօսութեան մէջ երկար կանգ առնել Գէօթէի բաղմարովանդակ կեանքի վերաբերեալ հանգամանքների վրայ: Բայց թոյլ ենք տալիս մեզ միայն մի-երկու նկատողութիւններ անել: Պ. Թառայեանցը տիկին Ֆօն Շտայնի սէրը դէպի Գէօթէն՝ շատ է իդէալականացնում: Տիկինը յիրաւի հասարակ արարածներից չէր, «մի փափկասուն, նրբագգաց (ծ) և դէպի բարձր ձգտող հոգի էր», բայց միաժամանակ մի կին էր բառի բուն նշանակութեամբ, ազատ չէր իրանց սեռի հիմնական առանձնայատկութիւններից՝ խանդի կողմից անզուսպ, ինքնասիրութեան մէջ՝ հիւանդոտ: Թէև նա 10 տարուց աւելի բարեկամական մտերիմ յարաբերութեան մէջ էր Գէօթէի հետ, բայց վերջը չը զանդաղեց՝ առանց միջոցների խտրութեան՝ ստուեր ձգել մեծ բանաստեղծի անուան վրայ: Բաւական է յիշել նրա թողած՝ կանացի բամբասանքներով լի՝ յայտնի նամակները և մանաւանդ մի պատկիլ-դրաման՝ «Դիդօ», ուր անուանարկում է ոչ միայն Գէօթէն, այլ և իր կինը՝ Քրիստինէն: Հեղինակը մասամբ Լիւիսին, գուցէ մասամբ էլ Բիլչովսկուն հետեւելով՝ Գէօթէի իտալական ճանապարհորդութեանը մեծ նշանակութիւն է տալիս: Պէտք է նկատել, որ Գէօթէի թէ ընդհանուր և թէ առանձնապէս գեղարուեստական աշխարհայեացքի զարգացման, կաղմակերպուելու ընթացքում աչքի է ընկնում բաժանման, տարբերութեան մի սահման—եթէ կարճ արտայայտելու լինենք՝ Գէօթէն իբրև բնութեան, միւս կողմից՝ իբրև արուեստի երկրպագու: Առաջինը Գէօ-

թէի երիսասարդ չըջանն է, հանճարեղ բանաստեղծը բնութեան կախարդիչ հոգեզմայլութեամբ համակուած՝ ստեղծագործում էր մի յախուսն, անխուսափելի թափով և միանգամայն ինքնաբուղիս ոյժով. սա այն չըջանն է՝ երբ նա ոգեւորւում էր Ռուսսոյի և Հէրդէրի նման անձնաւորութիւններով, որոնք 18-րդ դարում բնութեան պաշտամունքի սկզբնական հեղինակներն էին: Երկրորդ չըջանում մինք արդէն տեսնում ենք առնական Գեօթէին. նա այժմ սառն է, հանգիստ և անխռով, երիտասարդական բուռն ջերմութիւնից ազատ՝ զգացմունքի և յոյզերի ներգաշնակութեան բովից անցած. այն անզուպ հիացմունքը, որ նա տածում էր դէպի բնութիւնը՝ արդէն մեղմացել է և նա այժմ կլասիկական, հելլէնական ստեղծագործութիւնների մէջն է որոնում բարձրագոյն գեղարուեստի իդէալը:

Ահա այս երկու չըջանների տարբերութիւնը, շատերի կարծիքով, տեղի է ունենում շատ սուր կերպով, յանկարծակի. և տարբերութեան վճռական սկզբնակէտը հէնց Գէօթէի իտալական ճանապարհորդութիւնն է համարւում: Բայց սա արդէն չափազանցութիւն է: Իտալիայում Գեօթէն, անշուշտ, ստացաւ զօրեղ զրդումներ, ազդու տպաւորութիւններ, դիտելու և վերարտադրելու նոր ձևեր—սա երևում է հէնց այն եղանակից, որով նա բնութիւնն է նկարագրում իր «Իտալական ճանապարհորդութեան» մէջ. նա բնութեան դէմ առ դէմ այլ ևս խորապէս տպաւորուող ինքնամոռաց, զգայուն բանաստեղծը չէ, այլ վերլուծող, խորհրդածող մի անձնաւորութիւն, այնպէս որ նրան այժմ լեռնաշղթաների կազմութիւնը, ձևակերպութիւնը կամ դանազան հանքերի շերտերը, կարծես, աւելի են գրաւում քան թէ բնութեան իսկական գեղեցկութիւնը: Բայց վերոյիշեալ երկու չըջանների յաջորդականութիւնը չէր կարող յանկարծակի տեղի ունենալ, այլ աստիճանաբար. Իտալիան այցելելուց առաջ Գէօթէի մէջ արդէն եռ էր գալիս նոր հակումների սաղմը, ներգաշնակ աշխարհահայեացքի ձգտումը:

Իտալական ճանապարհորդութեան «առակը» մի քանի տարի առաջ ակներև փաստերով հերքեց կարլ Հայնէման՝ Գէօթէի մասին գրած իր մի ընդարձակ և տաղանդաւոր աշխատութեամբ, որ ինչպէս երևում է, անծանօթ է պ. Թառայեանցին:

Գէօտէի գրուածքների մասին, ինչպէս նկատեցինք, հեղինակը միայն թուցիկ տեղեկութիւններ է տալիս: Առանձնապէս կանգ է առնում «Վէրթէրի», «Էգմոնդի», «Իֆիգենիայի», «Հերման և Դորոթէայի» ու «Փառստի» վրայ: Առհասարակ նա

հաղորդում է այս գրուածքների համառօտ բովանդակութիւնը միայն. տեղ տեղ չէ զլանում ի նկատի առնել նաև գրուածքի առաջնորդող իդէան. իսկ գեղարուեստական գնահատութիւնը, բնաւորութիւնների վերլուծումը հայն բայ է թողնում: Գէօթէի մի քանի նշանաւոր գրուածքների մասին — օր. «Torquato Tasso», «Prometheus», «Wahlverwandschaften», «Wahrheit und Dichtung» և այլն — համարեա ոչ մի յիշատակութիւն չէ անում, առաջին երկուսի անուններն է միայն յիշում: Պակասաւոր է թւում մեզ մանաւանդ այն հանգամանքը, որ բանաստեղծի նամակների առիթով ոչ մի խօսք չէ ասուած:

Պ. Թառայեանցը «Կսէնիների» նշանակութիւնը շատ է մեծացնում: Այն ինչ խայթող, մտրակողական բանակոխը այնքան էլ չէր յարմարում անգուգական բարեկամ բանաստեղծներին՝ Գեօթէին և Շիլլերին: Առաջինի նշանաբանն էր.

«Bilde, Künstler, rede nicht;
Deine That sei dein Gedicht».

(Ստեղծագործիր, արուեստագէտ, մի՛ խօսիր — գործդ թող լինի քո բանաստեղծութիւնը). իսկ Շիլլէրը ահա թէ ինչ է գրում Գէօթէին. «Կսէնիների» անմիջ փորձերից յետոյ՝ մենք պէտք է այժմ մեր հոանդը աւելի արժանաւոր և ընտիր երկերի նուիրենք ու մեր բանաստեղծական բնաւորութիւնը՝ յամօթ մեր հակառակորդների՝ բարիին և ազնուին ծառայենք»:

Չենք կարող հաշտուել նաև պ. Թառայեանցի այն գնահատութեան հետ, որով նա վերաբերում է դէպի «Վիլհէլմ Մայստէր»։ Այս նշանաւոր վէպը միայն «Թատրոնի ու դերասանների կեանքի» նկարագիրը չէ, այլ գեղարուեստական մի խոշոր երևոյթ. սխալ է նաև ասել, որ դա «չունէր որ և է տէնդէնցիա»։ Ընդհակառակն՝ վէպի թէ առաջին և թէ երկրորդ մասը առաջնորդում է կրթական մի կարևոր տէնդէնցիայով — րէալական աշխարհայեացքի վարդապետութեամբ։ Այս հիմնական իդէան էր, որ առիթ տուեց րօմանտիկ նշանաւոր բանաստեղծներից մէկին՝ Նօվալիսին նկատելու թէ՛ «Վիլհէլմ Մայստէրը» կրում է «գեղարուեստական արձեիզմի ոգի»։ Եւ Նօվալիս գրեց հակառակ ուղղութեամբ մի վէպ՝ «Heinrich von Ofterdingen», ուր ընդդէմ իրական աշխարհայեացքի՝ մի հիպօքրանչ օրհներգ է կարդում յանուն բանաստեղծութեան։ Շիլլէր «Վիլհէլմ Մայստէրի» առիթով գրում էր հետեւեալը. «Կեանքիս ամենալաւ բախտաւորութիւններից մէկն եմ համարում, որ աւանատես եմ այս երկի ստեղծագործութեանը»։

Որովհետև հեղինակը Գէօթէի միւս գրուածքների մասին

շատ համառօտ տեղեկութիւն է միայն տալիս, սպասելի էր գոնէ, որ նա առանձնապէս կանգ կ'առնէ «Փառւածի» վրայ: Բայց նա չէ պարզում այս հսկայական ստեղծագործութեան ոչ միայն ամբողջութիւնը, այլ նոյն իսկ հիմնական գծերը: Նկատենք, ի միջի այլոց, որ հեղինակը սխալուում է ասելով թէ՝ «Փառւածից միայն զանազան կտորներ, առանձին տեսարաններ, կարելի է ներկայացնել բեմի վրայ»: Չը գիտենք ուրիշ տեղերում «Փառւածը» ինչպէս է ներկայացւում, բայց Գերմանիայում ողբերգութեան ներկայացումը տեղի է ունենում երբեմն առանց կրճատման կամ ռաւ աննօսան կրճատումներով միայն և տեւում է սովորաբար երկու օր—մի երեկոյ խաղում են առաջին, իսկ հետեւալ երեկոյ երկրորդ մասը:

Հեղինակը Լիւբիսի հետեւողութեամբ կենսագրութեան վերջին երեսներում աշխատում է բնորոշել Գէօթէի ընդհանուր մարդկային արժանաւորութիւնները: Պարոնի բնորոշումը մեզ թւում է ընդհանրապէս ճիշտ և հիմնաւոր: Գէօթէն թէ՛ իբրև արուեստապէս և թէ՛ իբրև մարդ մի այնպիսի մեծութիւն է ներկայացնում, որ միանգամայն հեռու է հասարակ մահկանացուների շարքը դասուելուց: Այս է պատճառը, որ չափել նրան սովորական մասշտաբով՝ նշանակում է չը ճանաչել նրան, նրա հսկայական մեծութիւնը նսեմացնել: Այս եղանակով են դնահատել նրան թէ՛ հին և թէ՛ ժամանակակիցներից ոմանք, որոնք չարունակ խայթում են «Ոլիմպոսի մեծ որդեգրին» նրա «հայրենասիրական ստեղծութեան», «սոնհուստութեան» և «անբարոյականութեան համար»:

Միանգամայն համաձայն ենք պ. Թառայեանցի հետ, որ Գէօթէն քաղաքագիտութեան մէջ վարպետ չէր, բայց նրան ֆրանսիական յեղափոխութեան հակառակորդ յայտարարել՝ երբէք չենք կարող: Գէօթէն միայն յեղափոխութեան եղանակի դէմ էր և ոչ թէ սկզբունքի. նա հաւատարապէս հակառակ էր թէ՛ յեղափոխութեան պարագլուխներին և թէ՛ էմիգրանտներին, որոնք միջոցների ոչ մի խարութիւն չէին ընդունում, նոյն արիւնարբութեան և սարսափելի բնազդներովն էին ղեկավարւում: 1792-ի ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ Գէօթէն համարւում էր մինչև իսկ «հասարակապետական»:

Պ. Թառայեանցը նոյն իսկ ոճի կողմից շատ է ազդուել Լիւբիսից: Պարոնի լեզուն բաւական սահուն է՝ այնպէս որ զիրքը հեշտութեամբ է կարդացւում: Տեղ-տեղ անպակաս են ինչպէս լեզուի, նոյնպէս և տառախալներ: Յիշենք լեզուի սխալներից ամենաբնորոշը—համակ թեղադրել «Վիլհէլմ ֆօն Հումբօլ-

դի վրայ» (Երես 140): Չենք կարող ուշադրութիւն չը դարձնել նաեւ մի ուրիշ աչքի ընկնող սխալի վրայ, որ զուտ թարգմանական է. պարսնը Գէօթէի «Die Geschwester» թարգմանում է «Քոյրերը» (Եր. 70), այն ինչ գերմանական Geschwester բառը նշանակում է փոյր ու եղբայրներ և ոչ թէ քոյրեր:

Վ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

55) «Հանդէս Հայագիտութեան».—Zeitschrift für armenische Philologie—I հատոր, ա. տետր. Մարբուրգ, 1901. Հորս տետրից բաղկացած հատորի բաժանարդագինն է 10 մարկ (Ռուսաստանում 5 ռ., Անգլիայում 10 շ., Ֆրանսիայում 12 ֆր. 50 ս.):

Մարբուրգի համալսարանի պրիվատ-դոցէնտ՝ զօկտօր Ֆ. Ն. Ֆինկ, որ հայագիտական ուսումնասիրութիւնների համար մի տարուց աւել է արդէն Կովկասումն է գտնւում՝ պ. Արզար Յովհաննիսեանի մասնակցութեամբ սկսել է մի համակրելի ձեռնարկութիւն. յարգելի գիտնականը՝ Նդնիկ վարդապետ Գեանջեցեանի և պարոն Յակոբ Մանանդեանի հետ միասին՝ հրատարակում է վերոյիշեալ հայագիտական հանդէսը, որի առաջին տետրը մի քանի չաբաթ առաջ լոյս տեսաւ:

«Հանդէս Հայագիտութեան» լինելու է բաւական բազմաբովանդակ. այնտեղ զետեղուելու են ոչ միայն լեզուագիտական, այլ և գրականական, պատմական, աշխարհագրական և այլն ուսումնասիրութիւններ՝ ինչպէս հայերէն, նոյնպէս եւրոպական զանազան լեզուներով:

Առաջին տետրը բաղկացած է 96 երեսից և ամփոփում է վեց փոքր կամ մեծ յօդուածներ, որոնցից մէկը՝ պ. Ստ. Մալխասեանի «Մի նկատողութիւն Փաւստոսի պատմութեան մասին» գրուած է հայերէն, իսկ մնացածները գերմաներէն լեզուով:

Պ. Ֆինկի յօդուածի նիւթը կազմում է էջմիածնի մատենադարանում գտնուող մի հաւաքական ձեռագիր Յիշեալ ձեռագիրն ամփոփում է—ա. Սամուել Անեցու ժամանակագրութիւնը. բ. Հեքում պատմիչի ժամանակագրութիւնը (Քրիստոսի ծննդից մինչև 1294 թ.). գ. Պատմութիւն ազգին Ռուբինանց թեորպէս տիեզիկի կիլիկիո. դ. Ազգաբանութիւն քաղաւորացն Երուսաղէմի եւ քաղաւորացն Կիպրոսի. և. Ազգաբանութիւն բըրընձոյն (պրինց, իշխան) Անտիոքա. զ. քաղուածք Միքայէլ Ասորեցու ժամանակագրութիւնից: